

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Անժելա Ամիրխանեան

anjela.nersisyan.1969@mail.ru

Ծնած է Կիրորվական (այժմ Վանաձոր), 1969ին: 1995ին աւարտած է ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտետի հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը: Ներկայիս ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի գիտաշխատող է եւ կ'ուսումնասիրէ հայոց հաւաքական մշակոյթն ու անոր արդի դրսեւորումները, ինչպէս նաեւ էթնոլեզուաբանական եւ էթնոքուստանական խնդիրները:

Համահեղինակ է (Ս. Հոբոսեանի, Բ. Գասպարեանի, Հ. Յարութիւնեանի, Ա. Սարատիկեանի հետ), *Խաղողի եւ գինու հայոց մշակոյթը*, հատորին (Երեւան 2021):

Սիւզաննա Բարսեղեան

syuzanna.barseghyan@gmail.com

Ծնած է Երեւան: 2005ին վկայուած է ընկերաբանութեան մագիստրականով, իսկ 2020ին՝ պատմական գիտութիւններու թեկնածուի կոչումով՝ ազգագրութիւն մասնագիտացմամբ: 2004-09՝ աշխատած է Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւններու հայկական կեդրոնը, իբրեւ վերլուծաբան, ապա՝ հետազոտութիւններու ղեկավար: 2020-21՝ եղած է ՀՀ վարչապետի օգնական: 2011էն՝ ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի Սփիւռքի հետազոտութիւններու բաժնի գիտաշխատող է: Հեղինակ եւ համահեղինակ է գիտական ու կիրառական հետազոտութիւններու եւ յօդուածներու:

Սեդա Գալստեան

sedagalstyan@yahoo.com

Ծնած է Երեւան, 1957ին: 1980ին աւարտած է ԵՊՀ պատմութեան ֆակուլտետը: 1992էն ցայսօր Հայաստանի պատմութեան թանգարանի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնի վարիչն է:

Մասնակցած է գիտաժողովներու, հրատարակութեան պատրաստած է Ա-Դոյի, *Հայութեան երկունքը* (2014) հատորին ծեռագիրը, համահեղինակն է (Սահակ Թորոսեանի հետ) *Հայաստանի առաջին հանրապետութեան Երեւանի նահանգապետը* մենագրութեան (2007) եւ *Կոչեմ ապրողաց* գիրք-ալպոմին (2015), հեղինակն է *Սարդարապատի հերոսը, մահապարտների հոգին, Կարսի դաաճանութեան զոհը* (2019), *Վերածնունդ Հայաստան՝ Տէր Զօրից Սարդարապատ* (2020) հատորներուն, ինչպէս նաեւ *Հայոց պետականութեան վերածննդի 100 էջերը* լուսանկարային-ալպոմ դասագիրքին (2018): 2022ին արժանացած է «Հայաստանի նոր եւ նորագոյն պատմութիւնը ճանաչելի դարձնելու» պատուոգրին: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայաստանի Ա. հանրապետութիւնը, Խորհրդային շրջանը:

Մարի Ալիք Գարամանուկեան

maryalikkaramanoukian@gmail.com

Ծնած է Մոնթրէալ, 1993ին: 2015ին աւարտած է Հալէպի համալսարանի անգլերէն լեզուի եւ գրականութեան բաժինը, իսկ 2018ին՝ մագիստրականը, Հայաստանի ամերիկեան համալսարանի անգլերէնը իբրեւ օտար լեզու դասաւանդելու բաժինէն, ուրկէ 2021ին ստացած է քաղաքական գիտութիւններու մագիստրականը: Ներկայիս կը բնակի Երեւան: Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ քաղաքական համարկումը, Սփիւռքը, բառապաշարի դասաւանդում եւ իրացում:

Գալիա Դավիդովա**galya.davidova.60@gmail.com**

Ծնած է 1960ին, Արմավիր: 1986ին աւարտած է ԵՊՀ պատմութեան բաժանմունքը: 1986էն կը պաշտօնավարէ Հայոց ազգագրութեան թանգարանի «Ազգագրութեան» բաժինը (ներկայիս՝ աւագ գիտաշխատողի հանգամանքով):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ասորիներու ԺԹ. դարավերջ-Ի. դարակիզը պատմութիւնը եւ ընկերատնտեսական պայմանները, հայոց եւ ասորական հարսանեկան ծիսակարգերն ու տօները, Հայաստանի ասորիներու տօները: 2016ին հրատարակած է «Ասորական եւ հայկական հարսանեկան ծիսակարգերի համեմատական բնութագիրը (ԺԹ. դարավերջ – Ի. դարակիզը)» յօդուածը: 2019էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Հրանդ Խաչատուրեան**herantk33@gmail.com**

Ծնած է 1933ին, Իսքենտէրուն: 1939ին ընտանեօք հաստատուած է Լիբանան: 1958ին վկայուած է Պէյրուսի ամերիկեան համալսարանէն իբրեւ բժիշկ եւ տեղափոխուած Մ. Նահանգներ: 1958-61՝ կատարած է յետդոկտորական ուսումնասիրութիւններ՝ հոգեբանութեան բնագաւառին մէջ, Րոչեսթըրը (Նիւ Եորք) համալսարանը: 1984ին արժանացած է Richard W. Lyman մրցանակին, անդամ է “Alpha Omega Alpha”-ին: 1985ին Pacific Graduate School Psychology-ն իրեն շնորհած է պատուոյ դոկտորի կոչում:

1958-61՝ պաշտօնավարած է Րոչեսթըրի Strong Memorial Hospital-ին մէջ, իսկ 1969էն դասաւանդած, վարչական, կրթական եւ մանկավարժական բեղուն գործունէութիւն ծաւալած է Սթենֆորտ համալսարանին մէջ, ուր ստանձնած է բարձրագոյն պաշտօններ: Հեղինակ է 11 հատորներու, որոնց շարքին՝ *Fundamentals of Human Sexuality* (1972), *Human Sexuality: A Comparative and Developmental Perspective* (1974), *Human Sexuality: Sense and Nonsense* (1974), *Biological Aspects of Human Sexuality* (1975), *Guilt: The Bite of Conscience* (1977, 2010), *Fifty: Midlife in Perspective* (1986), *Cream of the Crop: The Impact of Elite Education in The Decade After* (1994), *The Way it Turned Out: A Memoir* (2012):

Լալիկ Խաչատուրեան**lingual151@mail.ru**

Ծնած է 1952ին, Կամօ (այժմ՝ Գաւառ): 1973ին աւարտած է ԽԱՀՊՄՀ-ի բանասիրական ֆակուլտետը: 1997ին պաշտպանած է դոկտորական, 2003ին ստացած է փրոֆեսորի կոչում: 1997-2003՝ գրաբար եւ հայ հին գրականութիւն դասաւանդած է Հալէպի մէջ: 2001-13 եւ 2015-16՝ ԽԱՀՊՄՀ հայոց լեզուի եւ անոր դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հին հայերէնը, բառակապակցական իմաստաբանութիւնը, բառարանագրութիւնը, հայոց լեզուի տեսութիւնը, ընդհանուր լեզուաբանութիւնը եւ փոխառութիւնները: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու: 2019էն վարիչն է ԽԱՀՊՄՀ լեզուաբանական հետազօտութիւններու գիտական աշխատանոցին: 2022էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Սամուէլ Խաչատուրեան**samuelpkhatatourian@gmail.com**

Ծնած է Արմավիր, 1996ին: 2019ին աւարտած է մագիստրականը՝ ԵՊՀ-ի Եւրոպական ուսումնասիրութեանց կեդրոնէն:

Գիտական հետաքրքրությանց ծիրը կ'ընդգրկե ժողովրդահաճութիւնը, հայկական քաղաքական բնագաւառը, Եւրոպական Միութիւնը եւ քաղաքական ծրագրերու արժեւորումը:

Վազգէն Հախոյեան (Վան Կարնոյ)

van.karno@gmail.com

Բանաստեղծ, պատմաբան: Ծնած է 1992ին, Հարթազիւղ, Լօռի: 2020ին աւարտած է ԵՊՀ պատմութեան կաճառի հայագիտութիւն մասնագիտութեան մագիստրականը: Նոյն թուականին ընդունուած է Ծիծեռնակաբերդի Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտ հիմնադրամի թեկնածուականի բաժինը: Հրատարակած վերջին յօդուածն է «Կարսի հայութեան կոտորածը 1920-1921 թթ.»:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Թուրքիոյ ցեղասպան քաղաքականութիւնը Արեւելեան Հայաստանի մէջ:

Վահրամ Հովեան

vhovyan@yandex.ru

Ծնած է 1981ին, Ծալկայի շրջան, Վրաստանի Հանրապետութիւն: 2005ին պաշտպանած է մագիստրականը ԵՊՀ միջազգային յարաբերութիւններու ֆակուլտետի քաղաքագիտութեան ամբիոնը: 2006-18՝ պաշտօնավարած է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին մէջ, 2019էն «Օրբելի» կենտրոնի փորձագէտ է: Հեղինակ է բազմաթիւ յօդուած-ուսումնասիրութիւններու, եւ համահեղինակ՝ շարք մը գիրքերու: Մասնակցած է գիտաժողովներու, նաեւ՝ Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի գիտաժողովներուն:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սփիւռքի արդի հիմնախնդիրները, Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները: 2015էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէսին*:

Մոհամմադ Մալեքմոհամմադի

MalekMohammadi@em.uni-frankfurt.de

Ծնած է 1972ին, Իրան: Թեկնածուականը պաշտպանած է 2015ին, ԵՊՀ-ի եւ Վ. Բրիւսովի անուան Լեզուաբանական Համալսարանին մէջ: 2020էն անդամ է Հայագիտութեան Միջազգային Ընկերակցութեան (AIEA), 2005էն մաս կը կազմէ Սպահանի Համալսարանի հայագիտութեան եւ գերմանական լեզուներու եւ գրականութեան բաժնի դասախօսակազմին, 2014էն անդամ է ՀԱԱ ԳԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի լեզուաբանական հանդէսի խմբագրակազմին: Ունի բազմաթիւ ուսումնասիրական յօդուածներ հայ-իրանական լեզուական առնչութիւններուն մասին: Հեղինակ է *Persian language teaching (for Armenian students)*, *հղր. 1* (2014) հատորին: Ներկայիս ընկերակից փրոֆեսոր է Սպահանի Համալսարանին եւ Ալեքզանտր Ֆոն Հումպոլտի անուան դասախօս՝ Johann Wolfgang Goethe Համալսարանին: 2010էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէսին*:

Միհրան Մինասեան

mihran.min@gmail.com

Ծնած է Հալէպ: Երկրորդական ուսումը ստացած է Ազգային Քարէն Եփփէ ճեմարանը: Համահեղինակութեամբ հրատարակած է *Հալէպցիներու ապստամբութիւնը օսմանցի կուսակալ Խորշիկ Գաշայի դէմ (1819-1820) - Աբրահամ արք. Քիւրէլեանի օրագրութիւնը* արաբերէն հատորը 2008ին: Կ'աշխատակցի Հասկ հայագիտական տարեգիրքին, *Բագինին*, *Յեղասպանագիտական հանդէսին*, *Բանբեր մարտնադարանին* եւ այլ հանդէսներու եւ յօդուածներու ժողովածու գիրքերու՝ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններով, նուիրուած հայ հնատիպ գիրքին, հայ պար-

բերական մամուլի մատենագիտության, հայերէն ձեռագիրներու, Հայոց Յեղասպանության պատմության, հայ լուսանկարչության եւն.:

Զբաղած է նաեւ բանահաւաքութեամբ: Հայոց Յեղասպանութենէն հարիւրաւոր վերապրողներէ գրի առած է վկայութիւններ եւ ազգագրական-բանահիւսական հսկայ նիւթ: 2012էն կ'ապրի Երեւան ու կը պաշտօնավարէ Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերու ինստիտուտ-մատենադարանին եւ ՀՀ Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտին մէջ: 1981էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Էլինա Մխիթարեան

mkhitarian.elina.m@gmail.com

Ծնած է 1985ին, Արցախի Ստեփանակերտ քաղաքը, մանկավարժներու ընտանիքի մէջ: 2002-07՝ ուսանած է Արցախի պետական համալսարանի (ԱՊՀ) մարդասիրական ֆակուլտետը եւ վկայուած իբրեւ պատմութեան ուսուցիչ-պատմաբան: 2012ին աւարտած է երկրորդ մասնագիտութիւնը՝ իրաւագիտութիւն, իսկ 2022ին մագիստրականը՝ նոյն մասնագիտութեամբ: Հետեւած է զանազան խտացուած դասընթացներու՝ հաշուապահութիւն, պետութիւն-հասարակութիւն-կառավարում-առաջնորդութիւն, կազմակերպում, մարդկային աղբիւրներու կառավարում եւն. նիւթերով: Հետեւած է նաեւ վերապատրաստման դասընթացներու:

2007էն աշխատած է Արցախի Հանրապետութեան գաղթականներու, վերաբնակեցման, հայրենադարձութեան, տեղահանուածներու հարցերով զբաղող պետական կառոյցներու մէջ: 2022 Ապրիլէն Արցախի Հանրապետութեան պետական նախարարի խորհրդական է՝ տեղահանուածներու եւ փախստականներու, ընկերային աշխատանքի, Կարմիր Խաչի միջազգային կոմիտէի հետ համագործակցութեան հարցերով:

2008-13՝ դասաւանդած է «Գրիգոր Նարեկացի», իսկ 2012էն իվեր կը դասախօսէ ԱՊՀ պատմութեան եւ իրաւագիտութեան ֆակուլտետը, 2017էն՝ «Մեսրոպ Մաշտոց» համալսարանին մէջ կը վարէ գաղթականական իրաւունք, ընկերային իրաւունք դասընթացները: Հեղինակ է պատմագիտական եւ իրաւագիտական շուրջ երկու տասնեակ յօդուածներու: Պարգետատրուած է 2007ի «Լաւագոյն երիտասարդ աշխատակից» կոչումով, 2013ին՝ Արցախի Հանրապետութեան քաղաքացիական ծառայութեան Բ. դասի պետական խորհրդականի դասային աստիճանով՝ Արցախի Հանրապետութեան նախագահէն: Մխիթարեան ԱՊՀ աւագ դասախօս է, փախստականներու եւ տեղահանուած անձանց հարցերու փորձագէտ: Ամուսնացած է, ունի երեք զաւակ:

Րոպերթ Մկրտիչեան

rma@cadcafmservices.com

Ծնած է Մեսեչուսէթ, Մ. Նահանգներ, 1953ին: 1974ին աւարտած է Թաֆց համալսարանի քաղաքային ճարտարապետութեան, 1975ին՝ նոյն համալսարանի գեղարուեստից բաժինը, իսկ 2022ին՝ ոչ-շահութաբեր կառավարման մասնագիտութիւնը՝ Ուորսետթըր համալսարանէն:

2022ին կազմակերպած է իր հօր՝ Աբրահամ Մկրտիչեանի մետաղարուեստի ցուցահանդէսը՝ Քէյմպրիճի գրադարանին, ինչպէս նաեւ Արիզոնայի մանրակերտից թանգարանին մէջ:

Ստորագրած է խոհագրութիւններ արուեստի մասին: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ամերիկահայ արուեստը:

Կարէն Մկրտչեան

K86Mkrtchyan@gmail.com

Ծնած է 1986ին, Երեւան: 2014ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայ-իրանական յարաբերութիւնները 1991-2005 թթ.» նիւթով:

Ներկայիս ՀՀ ԳԱԱ պատմութեան հիմնարկի հայ գաղթածախներու եւ Սփիւռքի պատմութեան գիտաշխատող է: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն համաշխարհային նոր համակարգը, ՀՀ-Իրանի ԻՀ քաղաքական, տնտեսական, գիտակրթական, մշակութային յարաբերութիւնները, Իրանի հայ համայնքը, դարաբաղեան հակամարտութիւնը, Հայոց Ցեղասպանութեան հարցերը: 2018էն կ'աշխատակցի *Հայկազեան հայագիտական հանդէսին*:

Զաւէն Մսրրլեան

Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ պաշտպանած է մագիստրականը, Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ: 2003ին ՀՀ ԳԱԱ իրեն շնորհած է պատուոյ դոկտորայի կոչում, իսկ 2014ին ընտրուած է ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ:

Ասպարէզով կրթական մշակ է: 1967-2017՝ եղած է Պէյրութի հայ աւետ. գլոյճի տնօրէնը: Հեղինակ է մօտ 100 պատմական ուսումնասիրութիւններու, բազմաթիւ գիրքերու, որոնց վերջինը՝ *Հայերը համաշխարհային Բ. պատերազմին* (2020): 1971էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Հայկ Նազարեան

nazaryan_h90.90@mail.ru

Ծնած է Երեւան, 1990ին: 2008-10՝ ծառայած է հայկական բանակին: 2015ին աւարտած է ԽԱՀՊՄՀ-ի պատմութեան եւ իրաւագիտութեան ֆակուլտետի մագիստրականը: 2018ին պաշտպանած է ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի թեկնածուականը՝ «Մեծն Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերը Հայաստանում եւ Այսրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918 թթ.)» նիւթով: 2015-21՝ աշխատած է Հայաստանի ազգային արխիւին մէջ: 2022էն աւագ գիտաշխատող է Հայաստանի պատմութեան թանգարանի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնին մէջ:

Մասնակցած է շարք մը հանրապետական եւ միջազգային գիտաժողովներու: Հեղինակ է *Մեծ Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերը Հայաստանում եւ Այսրկովկասում (1914-1920 թթ.)* (2020) հատորին եւ շարք մը գիտական յօդաձեւերու՝ լոյս տեսած *Բանբեր Հայաստանի արխիւների, էջմիածին, Լրաբեր, Հայկական բանակ ռազմագիտական հանդէս, Պալմաբանասիրական հանդէս* պարբերաթերթերու եւ գիտական ժողովածուներու մէջ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ռազմական պատմութիւն, ռազմական արդիւնաբերութիւն, աշխարհառազմավարութիւն (Geostategy): 2022էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վահրամ Շեմմասեան

vahram.shemmassian@csun.edu

Ծնած է 1951ին, Թրիփոլի, Լիբանան: 1996ին պաշտպանած է դոկտորականը՝ “The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915” նիւթով: 2006էն տնօրէնն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժնին: Ունի բազմաթիւ յօդաձեւեր եւ Մուսա Լեւան բնակչութեան նուիրուած մենագրութիւններ, որոնց երկրորդը՝ *The Armenians of Musa Dagh: From Obscurity to Genocide Resistance and Fame (1840-1915)* (2020): Պարգետարուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ուիլիլմ Սարոյեան շքանշանով՝ Սփիւռքի մէջ հայագիտութեան եւ հայ

մշակոյթին զարգացման իր քերած նպաստին համար (2010): Արժանացած է Ծի-ծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի Ֆրանց Վեր-ֆել պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեռան մասին իր գիտաշխատութիւններուն (2015): 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Յակոբ Չոլաքեան

hagopcholakian@hotmail.com

Ծնած է Գարատուրան, Սուրիա: 2016ին ստացած է պատմական գիտութիւններու դոկտորի աստիճան, պաշտպանելով «Քեսապ (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)» աւարտաճառը: 2014էն ՀՀ ԳԱԱ ՀԱԻի գլխաւոր գիտաշխատող է: 54 տարի աշխատած է իբրեւ հայերէնի ուսուցիչ եւ դասախօս:

Հեղինակ է հայերէնի դասագիրքերու, գիտական յօդուածներու եւ ազգագրական, բանագիտական, պատմագիտական եւ լեզուաբանական հատորներու, որոնց վերջինը՝ *Պարմական Անտիոքի եւ շրջակայից բնիկ հայերն ու միւս հաւաքականութիւնները* (2023): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Անտիոքի շրջանի հայոց պատմութիւնը, ազգագրութիւնը, բանահիւսութիւնը, բարբառը, արեւմտահայերէնը, Սփիւռքի կրթական վիճակը: 1982էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Կարինէ Ռաֆայէլեան

karine.rafaelyan@mail.ru

Ծնած է 1964ին, Երեւան: 1985ին աւարտած է Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Պետական Մանկավարժական Հիմնարկի (այժմ Համալսարան) հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը: 1994էն Գրականութեան եւ արուեստի թանգարանի մասնաճիւղ Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի վարիչն է: 2008էն իբրեւ մշակութային լրագրող կը պաշտօնավարէ «Իրատես» լրատուական ցանցին մէջ: Կազմած, վերծանած, հրատարակութեան պատրաստած եւ խմբագրած է շարք մը երկեր: Հրատարակած է գրականագիտական ուսումնասիրութիւններ:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն գրականագիտութիւնը, թանգարանագիտութիւնը, մշակութաբանութիւնը: 2014էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Լուսինէ Սահակեան

lusine_sahakyan72@mail.ru

Ծնած է Երեւան, 1972ին: 1995ին աւարտած է Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցը (ԵՊԿ), իսկ 2007ին՝ արուեստագիտութեան թեկնածուականը՝ ԳԱԱ արուեստի ինստիտուտին մէջ՝ «Կոմիտասագիտութիւնը հայ երաժշտագիտութեան մէջ» նիւթով: 2018էն կ'աշխատի դոկտորական թեզին վրայ: 2009էն դոցենտ, 2014էն ԵՊԿ երաժշտութեան պատմութեան ամբիոնի վարիչն է: 2014էն անդամ է ԵՊԿ *Երաժշտական Հայաստան* ամսագրի խմբագրական խորհուրդին: 2015էն անդամ է Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական խորհուրդին, իսկ 2020էն՝ ԳԱԹի գիտական խորհուրդին: Հեղինակն է *Կոմիտասագիտութիւնը հայ երաժշտագիտութեան մէջ մենագրութեան* (2010), *Կոմիտաս Վարդապետ* (յօդուածներու ժողովածու) (2019) եւ Ռոբերտ Աթայեան մենագրութեան (2021):

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Կոմիտասագիտութիւնը, հայ յօրինողական արուեստը, համաշխարհային երաժշտութիւնը, հայագիտութիւնը:

Արմէն Շ. Սարգսեան

armensargg@gmail.com

Ծնած է 1949ին, Լոռուայ Շամուտ գիւղը: 2018ին պաշտպանած է դոկտորականը՝ «Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ եւ զուարճախօսութիւններ (անեկդոտներ)» նիւթով: 2005էն գիտաշխատող է ԳԱԱ ՀԱԻ հիմնարկին մէջ,

խմբագրած է շարք մը գիրքեր, հրատարակած բանահիսական եւ լեզուաբանական ուսումնասիրություններ, հեղինակ է շարք մը մենագրություններու, վերջինը՝ *Մանկական ծիծաղադարան* (2019):

Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ գրականութեան եւ բանահիսութեան փոխառնչութեան հարցերը, հայ մանկական բանահիսութիւն/զուարճախօսութիւնը, հայ ժողովրդական երգիծական մանրապատումներ/զուարճախօսութիւնները, ստապատումները, հայ ժողովրդական երկխօսական-հարցուպատասխանական ասոյթաբանութիւնը, բանահաւաքութեան եւ բանահիսութեան մեթոտաբանութիւնը, մանկագրութիւնը, առակագրութիւնը: 2015էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Անդրանիկ Տազէսեան

adakessian@haigazian.edu.lb

Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ “Democracy and Integration in Multicommunal Politics: The Armenians and the Kurds in Lebanon” նիւթով: 1993-2018՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2018էն պատասխանատու խմբագիրն է *Հայկազեան հայագիտական հանդէսին*: Անդամ է *Հայագիտական հարցեր* (2014), *Ցեղասպանագիտական հանդէս* (2018), *Բազմավէպ* (2019), *Բանբեր Հայաստանի արխիւների* (2023) պարբերականներու խմբագրակազմերուն: 2011էն տնօրէն է *Հայկազեան Համալսարանի հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին*: Այդ հանգամանքով կազմակերպած է ամենամեայ գիտաժողովներ: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Եգիպտոսի, Սուրանի եւ Եթովպիոյ հայերը/2 գիտաժողովի նիւթեր* (2023), կազմած է գիրքեր, վերջինը՝ *ՀՀՀՀ Հաճընի որբանոցը* (1919-1920) (2021), ունի մենագրություններ, վերջինը՝ *Լիբանանի հայօճախը, գիրք Ա., համարկումին խաչուղիները (1920-2005)* (2015):

Գիտական հետաքրքրությունները կ'ընդգրկեն ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Լուսինէ Տանաճեան

lusine.tanajyan@gmail.com

Ծնած է 1990ին: 2020ին ՀՀ ԳԱԱ ՀԱԻԻ մէջ պաշտպանած է թեկնածուական: 2011էն կ'աշխատի ՀԱԻԻ Սփիւռքի հետազօտություններու բաժինը՝ որպէս աւագ գիտաշխատող: Ան նաեւ դասախօս է: Մասնակցած է ղեկավարած է 20է աւելի միջազգային եւ ներպետական գիտահետազօտական ծրագրեր, կատարած դաշտային եւ վերլուծական աշխատանքներ՝ հայերու համեմատական ուսումնասիրություններու, սուրիահայերու ներգաղթի, սփիւռքեան ընկերային փոփոխություններու եւ այլ թեմաներու շուրջ: Գիտական հետաքրքրություններու ծիրը կ'ընդգրկէ Սփիւռքի ընկերային տեղաշարժերու, ընկերային շարժունակութեան, հայրենադարձութեան, գաղթականական նիւթերը: 2018էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Լիզա Քարիմեան

liz79k@gmail.com

Ծնած է 1979ին, Երեւան: 2001ին աւարտած է ԵՊՀ աստուածաբանութեան ֆակուլտետի մագիստրականը, իսկ 2004ին՝ թեկնածուականը: 1999-2002՝ իբրեւ խմբագիր եւ թարգմանիչ, աշխատած է, «Գանձասար» աստուածաբանական կեդրոնին մէջ: 2005-17՝ եղած է Վ. Բրիւսովի անուան պետական լեզուահասարակագիտական համալսարանի յունարէնի դասախօս, 2005էն ԵՊՀ կրօնի պատմութեան եւ տեսութեան ամբիոնի դասախօս է: Հեղինակ է *Հայ-բիւզանդական եկեղեցական յարաբերությունները 5-6րդ դարերում (420-550ական թթ.)* (2018) մենագրութեան:

